Երկրորդընթերցում
Նախագիծ

Կ-817-12.06.2015-SS-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան քաղաքային համայնքի (այսուհետ՝Դիլիջան քաղաք) և հարակից տարածքների (այսուհետ՝ Հարակից տարածք)զարգացման և ներդրումային ծրագրերի խրախուսման ու իրականացման նպատակով ներդրումային ծրագրերիհաստատման և իրականացման կարգը, ինչպես նաև Դիլիջան քաղաքի քաղաքաշինական փաստաթղթերի մշակման, քննարկման և հաստատման, քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները,տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները՝ հիմնված պետություն-մասնավոր համագործակցության սկզբունքի վրա:

Հոդված 2. Օրենքի նպատակը, խնդիրները և սկզբունքները

1. Սույն օրենքի նպատակն է.

1) ապահովել Տարածքի զարգացման ընթացքում Դիլիջան քաղաքի քաղաքաշինական և ճարտարապետական միասնական և համահունչ սկզբունքների կիրառումը, կառուցապատման գործունեության իրականացումը առողջ և գրավիչ կենսամիջավայրի ձևավորման համար,

2) խրախուսել և աջակցել Տարածքի պատմամշակութային առանձնահատկություններին և պահպանության ռեժիմին համապատասխանող քաղաքաշինական և կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացմանը,

3) ապահովել քաղաքաշինական նախագծերի հաստատման գործընթացի թափանցիկությունը, հրապարակայնությունը և հանրության մասնակցությունը որոշումների կայացման հանրային քննարկումների միջոցով,

4) նպաստել ներդրումային միջավայրի բարելավմանը և Տարածքի զարգացմանը ուղղված նոր ներդրումային ծրագրերի ներգրավմանը,

5) ներդնել Տարածքի զարգացման և ներդրումային գրավչության մակարդակի բարձրացմանը նպաստող համակարգեր

6) նպաստել «մաքուր քաղաք» և «կանաչ քաղաք» հայեցակարգի ներդրմանը:

2. Սույն օրենքի խնդիրներն են՝

1) հանրության համար առավել բարենպաստ շրջակա միջավայր ստեղծելը.

2) Դիլիջանի՝ որպես միջազգային նշանակության կրթական կենտրոնի հետագա զարգացման ապահովումը.

3) Դիլիջանի՝ որպես տուրիստական և հանգստյան գոտու զարգացման ու Տարածքի ներդրումային գրավչության համար անհրաժեշտ իրավական միջավայրի ձևավորումը.

4) սահմանված կարգով հաստատված քաղաքաշինական և ճարտարապետական պահանջների հետևողական իրականացման ապահովումը.

5) Բնության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող գործունեության բացառումը:

3. Սույն օրենքի սկզբունքներն են՝

1) պետություն-մասնավոր համագործակցությունը.

2) որոշումների կայացման թափանցիկությունը.

3) ծրագրերի իրականացման հաշվետվողականությունը:

Հոդված 3. Հիմնական հասկացություններ

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **Տարածք**՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան քաղաք եվ հարակից տարածքներ.

2) **Դիլիջան քաղաք**՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան քաղաքային համայնքի վարչական տարածք.

3) **Հարակից տարածքներ**՝ Տավուշի մարզի Հաղարծին, Թեղուտ, Գոշ, Աղավնավանք, Խաչարձան, Հովք համայնքների վարչական և «Դիլիջան» ազգային պարկի տարածքներ.

4) **Անձ՝** սույն օրենքով նախատեսված ծրագիր իրականացնող ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

5) **Ծրագիր՝** անձի կողմից ձեռնարկատիրական կամ ոչ ձեռնարկատիրական նպատակով Տարածքի, դրա առանձին ոլորտի կամ բնագավառի զարգացումը կամ օբյեկտի և/կամ ենթակառուցվածքների կառուցումը ներկայացնող փաստաթուղթ, որը հաստատվում է սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված կարգով.

6) **Դիլիջանի քաղաքաշինական և ներդրումների խրախուսման խորհուրդ**՝ սույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված նպատակներն իրականացնելու Դիլիջանի քաղաքապետին կից ձևավորված խորհուրդ.

7) **«Կանաչ» քաղաքաշինություն ու ճարտարապետություն**՝ քաղաքաշինության ու ճարտարապետության բնագավառի հատուկ ուղղություն, որի հիմնական նպատակն է՝ էկոլոգիապես կենսունակ, վերականգնվող էներգիայի, բնական ռեսուրսների արդյունավետ (խնայողաբար) օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության խնդիրների

գերակայությունն ապահովող տարածքների կազմակերպումն ու կառուցապատման ձևավորումը.

8) **«Կանաչ» կամ «կենդանի» տանիքներ**՝ ջրամեկուսիչ թաղանթի վրա տեղադրված հատուկ բնահողի վրա աճեցրած բուսական շերտով մասնակի կամ լրիվ ծածկված շենքի տանիք.

9) **Արգելված գործունեություն՝** սույն օրենքի 5-րդ հոդվածով սահմանված գործունեության տեսակներ:

2. Սույն օրենքում օգտագործվող այլ հասկացությունները կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Քաղաքաշինության մասին» և հարկային ու մաքսային բնագավառը կանոնակարգող Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված իմաստով, եթե սույն օրենքի դրույթներից չի բխում դրանց օգտագործման այլ իմաստ:

Հոդված 4. Տարածքի զարգացման գործընթացը կարգավորող օրենսդրությունը

1. Տարածքի զարգացման բնագավառում հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով:

2. «Դիլիջան» ազգային պարկի տարածքի վրա տարածվում է սույն օրենքով և «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքով սահմանված սահմանափակումները:

Հոդված 5. Արգելված գործունեություն

1. Տարածքում արգելվում է հետևյալ գործունեության իրականացումը.

1) Հանքագործական արդյունաբերություն, բացառությամբ կավի, ճենակավի, ածխաթթվային և ստորերկրյա հանքային ջրերի.

2) էլեկտրաէներգիայի արտադրություն, բացառությամբ արևային, հողմային, երկրաջերմային և կենսազանգվածի (մարդու կենսաբանական կամ տնտեսական գործունեության և այլ կենդանական ծագում ունեցող օրգանական և/կամ այրվող արգասիքներ, բուսական մնացորդներ և թափոններ, ինչպես նաև գյուղատնտեսական մշակաբույսեր) էներգիայի.

3) Կոքսի, նավթամթերքների և միջուկային նյութերի արտադրություն,

4) Քիմիական արդյունաբերություն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված տեսակների

5) Հայաստանի Հանրապետության օրենքներով արգելված այլ գործունեության տեսակներ:

2. Դիլիջան քաղաքի գոտիավորման նախագծերով առանձնացված տարածքներում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արգելված գործունեության տեսակներց բացի արգելվում է նաև հետևյալ ձեռնարկատիրական գործունեության տեսակները.

1) Անասնաբուծություն.

2) Բուսաբուծություն.

3) Մշակող արդյունաբերություն:

ԳԼՈՒԽ 2. ՏԱՐԱԾՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Հոդված 6. Տարածքի, դրա առանձին ոլորտների կամ բնագավառների զարգացման կամ օբյեկտների կառուցապատման ծրագրեր

1. Սույն օրենքի իմաստով ծրագիր է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված՝ առնվազն երկու միլիարդ Հայաստանի Հանրապետության դրամի ներդրմամբ Տարածքում առանձին ոլորտի զարգացումը կամ օբյեկտի և/կամ ենթակառուցվածքների կառուցումը ներկայացնող փաստաթուղթը: Ծրագրի արժեքը ներառում է Ծրագիրն իրականացնողի կողմից մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ անշարժ գույքի (շենք, շինություններ, հողատարածք) ձեռքբերման համար վճարված արժեքը:

2. Սույն գլխով սահմանված ծրագիրն առնվազն ներառում է.

1) Ծրագրի նպատակը և հակիրճ նկարագիրը.

2) Ծրագիրը ներկայացնող անձը.

3) Իրականացման գործընթացը՝ ըստ փուլերի, ժամկետների և ներդրումների (այդ թվում՝ կապիտալ ծախսեր, սեփական ներդրվող միջոցներ, ներգրավված և/կամ ներգրավվող միջոցներ).

4) Ծրագրի առանձնահատկությունների մանրամասն նկարագիրը.

5) սոցիալ-տնտեսական նշանակություն և ազդեցություն Տարածքի զարգացման վրա.

6) Հիմնական ռիսկերը և դրանց կանխարգելման ու նվազեցմանն ուղղված միջոցառումները.

7) Դիլիջան քաղաքի քաղաքաշինական և ներդրումների խրախուսման խորհրդի եզրակացությունը.

8) Այլ տեղեկություններ՝ ըստ Ծրագիրը ներկայացնող անձի հայեցողության:

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքում Ծրագրի շրջանակներում կառուցվող շենքերի նախագծումն ու շինարարությունն իրականացվում է էներգաարդյունավետության և էներգախնայողության պահանջների կիրառմամբ:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագրերի շրջանակներում այն իրականացնող անձինք օգտվում են սույն օրենքի 5-րդ գլխով սահմանված արտոնություններից:

ԳԼՈՒԽ 3. ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 7. Քաղաքաշինական և ներդրումների խրախուսման խորհուրդ

1. Դիլիջան քաղաքի գլխավոր հատակագծի, գոտիավորման, համայնքի քաղաքաշինական կանոնադրության, ճարտարապետական լուծումների, քաղաքաշինական նախագծերի, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասի օտարման, վարձակալության, կառուցապատման, օգտագործման իրավունքով այլ ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրման, առաջարկվող ծրագրերի վերաբերյալ եզրակացություն տրամադրման նպատակով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քաղաք Դիլիջանում քաղաքաշինական գործունեության նորմատիվ իրավական ակտերով սահմանված պայմանների և պահանջների իրականացման նկատմամբ ուսումնասիրություն իրականացնելու նպատակով ստեղծվում է հասարակական հիմունքներով մշտապես գործող Դիլիջանի քաղաքաշինական և ներդրումների խրախուսման խորհրդակցական մարմին (այսուհետ՝ Խորհուրդ):

2. Խորհուրդը կազմված է 9 անդամից, որոնց կազմը հաստատում է Դիլիջանի ավագանին: Խորհրդի կազմը ձևավորվում է՝ առնվազն 5 անդամ Դիլիջանում ներդրումային ծրագիր իրականացրած անձանց լիազոր ներկայացուցիչներից՝ ընդ որում ծրագիր իրականացրած յուրաքանչյուր անձ հնարավորություն ունենա ներկայացնելու մեկ ներկայացուցչի թեկնածություն Ներդրագիր իրականացրած անձանց կողմից սույն մասով սահմանված քանակից ավել թեկնածու ներկայացնելու դեպքում նշանակումն իրականացվում է առաջնահերթություն տալով այն անձանց, որոնց կողմից իրականացված ծրագրի ծավալը ավելի մեծ է, 1-ը՝ ավագանու անդամներից, իսկ 3-ը՝ համայնքի բնակիչներից, որոնք քաղաքաշինության կամ ճարտարապետության բնագավառում ունեն առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձ:

3. Խորհուրդը իր որոշումները կայացնում է ձայների մեծամասնությամբ:

4. Խորհրդի աշխատանքներին կարող են մասնակցել Տավուշի մարզպետը և Դիլիջանի քաղաքապետը, վերջիններիս լիազորված անձինք:

5. Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի անդամների կազմից, գաղտնի քվեարկությամբ՝ Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

6. Խորհուրդը գործում է իր կանոնադրությանը համապատասխան, որը հաստատում է Դիլիջան քաղաքի ավագանու կողմից՝ նման առաջին խորհրդի ձևավորումից հետո մեկամսյա ժամկետում ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ:

7. Խորհրդի կանոնադրությամբ սահմանվում է Խորհրդի կազմավորման, խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման, նիստերի հրավիրման, աշխատանքների, քննարկումների կազմակերպման, ուսումնասիրությունների իրականացման կարգը, ինչպես նաև քաղաքապետին եզրակացությունների կամ առաջարկությունների ներկայացման և դրանց հետագա ընթացքի ապահովման ընթացակարգը:

Հոդված 8. Խորհրդի իրավասությունը

1. Խորհուրդը Դիլիջանի քաղաքապետին տրամադրում է եզրակացություն

1) Դիլիջան քաղաքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի՝ Դիլիջան քաղաքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի և քաղաքաշինական գոտիավորման նախագծի, դրանց փոփոխությունների, ինչպես նաև նախագծման առաջադրանքների վերաբերյալ.

2) Համայնքի զարգացման քառամյա ծրագրի նախագծի վերաբերյալ.

3) Դիլիջան քաղաքի քաղաքաշինական կանոնադրության նախագծի վերաբերյալ.

4) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով սահմանված քաղաքաշինական այն փաստաթղթերի վերաբերյալ, որոնց պատվիրատուն է Դիլիջան քաղաքը.

5) համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, համայնքի ավագանու սահմանած պայմաններով, սահմանված կարգով օգտագործման տրամադրվող համայնքի սեփականություն համարվող գույքերի կամ հողամասերի վերաբերյալ.

6) քաղաքաշինական զարգացման և կառուցապատման ներդրումային հայեցակարգերի նախագծերի վերաբերյալ.

7) համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատողներին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքի կամ նախագծման թույլտվության հայտերի վերաբերյալ.

8) ճարտարապետաշինարարական նախագծերի, շինարարության (քանդման) թույլտվությունների հայտերի վերաբերյալ.

9) ավարտված շինարարության շահագործման փաստագրման հայտերի վերաբերյալ.

10) Տեղական նշանակության ավտոճանապարհներին արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության հայտերի վերաբերյալ.

11) համայնքի բնակավայրերի բարեկարգման և կանաչապատման նախագծերի վերաբերյալ:

2. Խորհրդի այլ իրավասությունն է՝

1) Ինքնակամ շինարարությունների կանխարգելման ու կասեցման, ինչպես նաև օրենքով սահմանված կարգով դրանց հետևանքների վերացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում Տավուշի մարզպետին և/կամ Դիլիջանի քաղաքապետին.

2) Շինարարության թույլտվությամբ նախատեսված ժամկետներում և քաղաքաշինական փաստաթղթերի համապատասխան կառուցապատման ուսումնասիրության իրականացում և առաջարկների ներկայացում Տավուշի մարզպետին, Դիլիջանի քաղաքապետին.

3) Շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքով, համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարման

ուսումնասիրություն իրականացում և առաջարկների ներկայացում Տավուշի մարզպետին, Դիլիջանի քաղաքապետին և/կամ ավագանուն.

4) Սույն օրենքով սահմանված արգելված գործունեության տեսակների ավելացման և/կամ փոփոխման վերաբերյալ առաջարկների ներկայացում Տավուշի մարզպետին, Դիլիջանի քաղաքապետին և/կամ ավագանուն.

5) Խորհրդի քննարկմանը ներկայացված ներդրումային ծրագրի վերաբերյալ եզրակացության տրամադրում ներդրումային ծրագրի նախագիծը ներկայացնող անձին.

ԳԼՈՒԽ 4. ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՌԵԺԻՄԸ ԵՎ ՏԱՐԱԾՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 9. Դիլիջան քաղաքի տարածքի իրավական ռեժիմը և Տարածքում քաղաքաշինական փաստաթղթերի մշակման և հաստատման առանձնահատկությունները

1. Դիլիջան քաղաքը համարվում է քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ:

2. Դիլիջան քաղաքի կառուցապատման համար նախատեսված գոտիների տարածքները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով առանձնացվում են քաղաքի գլխավոր հատակագծով և գոտիավորման նախագծով (նախագծերով):

3. Դիլիջան քաղաքում կիրառման համար նախատեսված՝ բնակելի կառուցապատման օբյեկտների սահմանված կարգով հաստատված օրինակելի նախագծերի կառուցապատման թույլտվությունները տրամադրվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պարզեցված ընթացակարգով:

4. Քաղաքաշինական փաստաթղթերի նախագծերը տեղական ինքնակառավարման մարմնի հաստատմանը ներկայացվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում ենթակա է հրապարակման համայնքի պաշտոնական համացանցային կայքում:

5. Դիլիջանի քաղաքապետը որոշումները ընդունելիս հաշվի է առնումԽորհրդի եզրակացությունը: Խորհրդի եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում Դիլիջանի քաղաքապետը 3-օրյա ժամկետում հրավիրում է համայնքի ավագանու արտահերթ նիստ, որում քննարկվում է Խորհրդի եզրակացությունը և Դիլիջանի քաղաքապետի կողմից Խորհրդի եզրակացությունը չընդունելու հիմնավորումը: Եթե Դիլիջանի ավագանին հավանություն է տալիս Խորհուրդի եզրակացությանը, ապա Դիլիջանի քաղաքապետն որոշում կայացնելիս առաջնորդվում է ավագանու որոշմամբ:

6. Կառուցապատման նպատակով տրամադրված թույլտվությունները երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում են համայնքի պաշտոնական համացանցային կայքում:

7. Դիլիջան քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության, կառուցապատման, օգտագործման իրավունքով տրամադրումն իրականացվում է շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետում կառուցապատման իրականացման պայմանով, որը ներառում է քաղաքաշինական օբյեկտի կառուցապատման և հողամասի կանաչապատման և բարեկարգման աշխատանքների կատարման համար անհրաժեշտ նորմատիվային ժամկետները: Սույն մասով սահմանված ժամկետը չի կարող գերազանցել 3 տարին:

8. Սույն հոդվածի 7-րդ մասով՝ շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում քաղաքաշինական օբյեկտի կառուցապատման և հողամասի կանաչապատման և բարեկարգման աշխատանքները չիրականացնելու դեպքում վարձակալության, կառուցապատման, օգտագործման իրավունքով այլ ֆիզիկական և իրավաբանական անձի տրամադրված գույքի պայմանագրերը դադարեցվում են:

ԳԼՈՒԽ 5. ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 10. Հարկային արտոնություններ

1. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված Ծրագրի իրականացման շրջանակներում՝

1) այն իրականացնող անձանց և ենթակապալառուների կողմից ապրանքների ներմուծումն (այդ թվում՝ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներից) ազատվում է ավելացված արժեքի հարկից.

2) այն իրականացնող անձանց և ենթակապալառուներին Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքների մատակարարումը և ծառայությունների մատուցումը (այդ թվում՝ անհատույց կամ մասնակի հատուցմամբ) ազատվում են ավելացված արժեքի հարկից.

3) այն իրականացնող անձանց շահույթը՝ մինչև հարկումը, կամ դրա այն մասը, որը մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը օգտագործվում է (ներդրվում է) ծրագրի շրջանակներում, ազատվում է շահութահարկով հարկումից.

4) այն իրականացնող անձանց կողմից ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց վճարվող՝ գործող օրենսդրության համաձայն, հայաստանյան աղբյուրներից ստացվող եկամուտներն ազատվում են ոչ ռեզիդենտի շահութահարկից.

5) այն իրականացնող անձանց կողմից ֆիզիկական անձանցից անշարժ գույք ձեռք բերելու համար վճարվող եկամուտներն ազատվում են եկամտային հարկով հարկումից:

2. Տարածքի համապատասխան համայնքի ղեկավարի կողմից հաստատված ցանկում ընդգրկված՝ համապատասխան համայնքի վարչական տարածքում իրականացված բնակելի, ինչպես նաև պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի

սեյսմակայունության, էներգետիկ արդյունավետության բարձրացման շինարարական աշխատանքներն ազատվում են ավելացված արժեքի հարկից:

Հոդված 11. Հարկային արտոնությունների դադարում

1. Ծրագիրը չկատարելու դեպքում այն իրականացնող անձանց մոտ առաջանում են լրացուցիչ պարտավորություններ՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով՝ արտոնություններից օգտվելու ամբողջ ժամանակահատվածի համար:

ԳԼՈՒԽ 6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 12. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Դիլիջան քաղաքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված ոչ բնակելի տարածքների օրինականացումն արգելվում է մինչև սույն հոդվածի 9-րդ մասի 1-ին կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի (ներառյալ՝ կառուցապատման համար նախատեսվող տարածքների առանձնացումը) և գոտիավորման նախագծի (նախագծերը) հաստատումը: Սույն մասով սահմանված ոչ բնակելի տարածքների օրինականացումն իրականացվում է սույն հոդվածի 9-րդ մասի 1-ին կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի (ներառյալ՝ կառուցապատման համար նախատեսվող տարածքների առանձնացումը) և գոտիավորման նախագծի (նախագծերի) հաստատումից հետո՝ դրանցով սահմանված չափանիշներին համապատասխանության դեպքում:

3. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, սույն օրենքով սահմանված կարգով քաղաքաշինական թույլտվություններ չստացած և առանց թույլտվության տարածքների ինքնակամ կառուցապատման օրինականացումն արգելվում է: Սույն մասով սահմանված դրույթներին չհամապատասխանող կառուցապատված տարածքները ենթակա է քանդման կառուցապատողի կողմից կամ հարկադրաբար՝ նրա միջոցների հաշվին:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված ինքնակամ կառուցված ոչ բնակելի տարածքների կառուցապատողներին անհատական ծանուցումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

5. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը, նախկինում տրամադրված ընդերքօգտագործման, էլեկտրաէներգիայի արտադրության գործունեություն իրականացնող անձիք, ինչպես նաև կառուցման փուլում գտնվող փոքր Հիդրոէլեկտրոկայանները շարունակում են իրենց գործունեությունը:

6. Հայաստանի Հանրապետության կառավարությունը վեց ամսվա ընթացքում իրականացնում է շահագործվող և շահագործման ենթակա հանքավայրերի, ինչպես նաև շահագործվող, կառուցման ընթացքում գտնվող և կառուցման թույլտվություն տրամադրված էլեկտրական էներգիա արտադրող հիդրոէլեկտրակայանների ուսումնասիրություն, գույքագրում և ըստ անհրաժեշտության ձեռնարկում է օրենսդրական կամ վարչական միջոցառումներ

7. Սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ծրագրերի նախագծերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի ներկայացման, հավանության արժանացմանը և ծրագրերի նկատմամբ հսկողությունը իրականացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված հարկային արտոնությունների կիրառության կարգը (ներառյալ արտոնությունների կիրառության համար հիմք ընդունվող՝ գործարքների կատարումը հիմնավորող փաստաթղթերը) հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

9. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31 սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագիծը (ներառյալ՝ կառուցապատման համար նախատեսվող տարածքների առանձնացումը) և գոտիավորման նախագիծը (նախագծերը).

2) մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31 Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատվում է Դիլիջան քաղաքի քաղաքաշինական կանոնադրությունը.

3) երկու տարվա ընթացքում սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատվում են Տարածքի այլ համայնքների գլխավոր հատակագծերը, գոտիավորման նախագծերը և քաղաքաշինական կանոնադրությունները:

ՏԵՂԵԿԱՆՔ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ	Առաջարկություն ներկայացնող	Առաջարկություն և դիտողություն	Եզրակացություն
1.	Առաջին ընթերցումից երկրորդ ընթերցում, Արայիկ Հովհաննիսյան	1. Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում, ինչպես նաև ամբողջ տեքստում օգտագործվող «հանրային մասնավոր» բառերը առաջարկում ենք փոխարինել «պետություն-մասնավոր» բառերով	**Ընդունելի է** Կատարվել է համապատասխան փոփոխությունը
2.		2. Նախագծի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում օգտագործվող «քաղաքային համայնքի» բառերը առաջարկում են փոխարինել «քաղաքային համայնքի վարչական» բառերով, իսկ նույն մասին 3-րդ կետում «համայնքների» բառերից հետո առաջարկում եմ լրացնել «վարչական» բառը, քանի որ առաջարկությամբ հստակեցվում է համապատասխան դրույթները	**Ընդունելի է** Կատարվել են համապատասխան փոփոխությունները
3.		3. Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկում եմ հանել «մասնագիտական» բառը, քանի որ Խորհուրդը եզրակացություն է տրամադրում քաղաքաշինական փաստաթղթերի և ներդրումային ծրագրերի վերաբերյալ, իսկ նախագծով խորհրդում 3 անդամի համար է նախատեսված քաղաքաշինության կամ ճարտարապետության բնագավառում առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձի պահանջը:	**Ընդունելի է** Կատարվել է համապատասխան փոփոխությունը
4.		4. Նախագծի 7-րդ հոդվածի 8-րդ մասում «գլխավոր ճարտարապետներին» բառերը առաջարկում ենք հստակեցնել, քանի որ Դիլիջան քաղաքային համայնքում գլխավոր ճարտարապետի հաստիք սահմանված չէ:	**Ընդունելի է** Կատարվել է համապատասխան փոփոխություն
5.		5. Հաշվի առնելով այն փաստը, որ նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ Դիլիջանի քաղաքապետը քաղաքաշինական բնագավառին վերաբերող Խորհրդի առաջարկները հաշվի առնելով առնվազն 2 աշխատանքային օրվա ընթացքում ձեռնարկում է միջոցառումներ առաջարկությամբ	**Ընդունելի է** Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը հանվել են, ինչի շրջանակներում լրացում է իրականացվել 7-րդ հոդվածի 7-րդ մասում, համաձայն որի՝ Ավագանու կողմից հաստատվող Խորհրդի

		ներկայացված խնդիրների ուղղությամբ, առաջարկում եմ նույն հոդվածի 4-րդ մասը հանել, քանի որ 3-րդ մասով սահմանված դրույթը արդեն իսկ կարգավորում է 4-րդ մասով սահմանված դրույթը	կանոնադրությամբ սահմանվում է Խորհրդի կազմավորման, խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման, նիստերի հրավիրման, աշխատանքների, քննարկումների կազմակերպման, ուսումնասիրությունների իրականացման կարգը, ինչպես նաև քաղաքապետին եզրակացությունների կամ առաջարկությունների ներկայացման և դրանց հետագա ընթացքի ապահովման ընթացակարգը:
6.		6. Անընդունելի է Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասում քաղաքապետի՝ հարցի լուծման համար «2 աշխատանքային օր» ժամկետ սահմանելը	Ընդունելի է Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասը հանվել է, ինչի շրջանակներում լրացում է իրականացվել 7-րդ հոդվածի 7-րդ մասում, համաձայն որի՝ Ավագանու կողմից հաստատվող Խորհրդի կանոնադրությամբ սահմանվում է Խորհրդի կազմավորման, խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման, նիստերի հրավիրման, աշխատանքների, քննարկումների կազմակերպման, ուսումնասիրությունների իրականացման կարգը, ինչպես նաև քաղաքապետին եզրակացությունների կամ առաջարկությունների ներկայացման և դրանց հետագա ընթացքի ապահովման ընթացակարգը:
7.		7. Նախագծի 9-րդ հոդվածի 7-րդ կետը վերախմբագրել նախատեսելով ավագանու որոշումների ընդունման ստանդարտ ընթացակարգ	**Ընդունելի է** Կատարվել է փոփոխություն, համաձայն որի՝ նախատեսվել է ավագանու նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ որոշում ընդունելու ընթացակարգ, միաժամանակ այս առաջարկությամբ պայմանավորված՝ վերացել է Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության

			օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի անհրաժեշտությունը: Այն հանվել է փաթեթից:
8.		8. Նախագծի 10-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված հողի հարկի և գույքահարկի արտոնությունը անընդունելի է, քանի որ Համայնքի ավագանին օրենքով արդեն իսկ ունի այդ լիազորությունը	**Ընդունելի է** **4-րդ մասը հանվել է**
9.		9. Հաշվի առնելով, որ Օրենքի նախագծով սահմանվում է միայն հարկային արտոնություններ, առաջարկում ենք նախագծից հանել «մաքսային» բառը	**Ընդունելի է** Կատարվել է համապատասխան փոփոխությունները
10.	Արայիկ Հովհաննիսյան Թևան Պողոսյան	10. Նախագծով սահմանված Ծրագրի չիրականացման դեպքում արտոնությունները դադարեցվում են և առաջարկվում է սահմանել թե ում կողմից ինչպես է իրականացվում դա	**Քանի որ Օրենքի նախագծի 12-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանավաված է դրույթ համաձայն որի՝** Սույն օրենքի 6-րդ հոդվածով սահմանված ծրագրերի նախագծերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի ներկայացման, հավանության արժանացմանը և ծրագրերի նկատմամբ հսկողությունը իրականացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Միաժամանակ Նախագծի լրամշակված 11-րդ հոդվածով սահմանվում է, որ Ծրագիրը չկատարելու դեպքում այն իրականացնող անձանց մոտ առաջանում են լրացուցիչ պարտավորություններ՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով՝ արտոնություններից օգտվելու ամբողջ ժամանակահատվածի համար:
11.		11. Առաջարկվում է խորհրդի լիազորություններում լրացնել նոր դրույթ, համաձայն որի՝ խորհուրդը եզրակացություն կտրամադրի Համայնքի զարգացման քառամյա ծրագրի նախագծի վերաբերյալ	**Ընդունելի է** Կատարվել է համապատասխան լրացում

12.		12. Հաշվի առնելով այն, որ Նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերով սահմանված՝ մինչև օրենքի ուժի մեջ մտնելը ապօրինի կառուցապատված ոչ բնակելի տարածքների օրինականացման համար նախատեսված մեխանիզմը իր մեջ պարունակում է կոռուպցիոն ռիսկեր, առաջարկում եմ Նախագծի 12-րդ հոդվածով նախատեսել դրույթ, համաձայն որի ապօրինի կառուցապատված ոչ բնակելի տարածքների օրինականացումը կասեցվում է մինչև Դիլիջան համայնքի արդի գլխավոր հատակագծի և գոտիավորման նախագծի հաստատումը: Ավելին առաջարկում եմ նախագծի 12-րդ հոդվածի 4-րդ մասը հանել, իսկ 2-րդ և 3-րդ մասերը խմբագրել հետևյալ բովանդակությամբ: «2. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Դիլիջան քաղաքի վարչական տարածքում ապօրինի կառուցապատված ոչ բնակելի տարածքների օրինականացումն արգելվում է մինչև սույն հոդվածի 8-րդ մասի 1-ին կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի (ներառյալ՝ կառուցապատման համար նախատեսվող տարածքների առանձնացումը) և գոտիավորման նախագծի (նախագծերը) հաստատումը: Սույն մասով սահմանված ոչ բնակելի տարածքների օրինականացումն իրականացվում է սույն հոդվածի 8-րդ մասի 1-ին կետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնքի (բնակավայրի) գլխավոր հատակագծի (ներառյալ՝ կառուցապատման համար նախատեսվող տարածքների առանձնացումը) և գոտիավորման նախագծի (նախագծերի) հաստատումից հետո՝ դրանցով սահմանված չափանիշներին համապատասխանության դեպքում: 3. Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո, սույն օրենքով սահմանված կարգով քաղաքաշինական թույլտվություններ չստացած և առանց թույլտվության տարածքների ինքնակամ կառուցապատման օրինականացումն արգելվում է: Սույն մասով սահմանված դրույթներին	**Ընդունելի է** Նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը խմբագրվել են, իսկ 4-րդ մասը հանվել է: Միաժամանակ նշեք, որ հաշվի առնելով առաջարկները,փաստացի ստացվում է այնպես որ օրինականացման գործընթացը սկսվում է 2 տարի հետո, և այդ ժամանակաընթացքում կարող է նախաձեռնել տեղեկացման գործընթացը: Միաժամանակ Հոդվածը լրացվել է նոր մասով, համաձայն որի ինքնակամ կառուցված ոչ բնակելի տարածքների կառուցապատողներին անհատական ծանուցումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:

		չհամապատասխանող կառուցապատված տարածքները ենթակա է քանդման կառուցապատողի կողմից կամ հարկադրաբար՝ նրա միջոցների հաշվին:»	
13.	Միքայել Մելքումյան	13. Օրենքի նախագծի 5-րդ հոդվածով սահմանվում է արգելված գործունեության տեսակներ, մասնավորապես բուսաբուծություն, անասնաբուծություն: Նման մոտեցումը անընդունելի է, քանի որ անձինք իրենց սեփական հողակտորում կարող են զբաղվել բուսաբուծությամբ:	1. Բնականաբար Օրենքի այս հոդվածի կարգավորման առարկան տնամերձ հողամասերում իրականացվող բուսաբուծությունը չի: 2. Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ Դիլիջան քաղաքի գոտիավորման նախագծերով առանձնացված տարածքներում նշված գործունեությունները արգելվում են որպես **<u>ձեռնարկատիրական գործունեության</u>** տեսակներ (ֆերմաների, ջերմոցների կառուցում) 3. Նման գոտիների քանակը լինելու է խիստ սահմանափակ և կներառի բացառապես քաղաքի զբոսաշրջային (օրինակ, զբոսաշրջիկային գրավչություն ունեցող հուշարձանների հարակից տարածքներ), կրթական (օրինակ Միջազգային դպրոցի հարակից տարածքներ), առողջարանային և հանգստի կազմակերպման (օրինակ, քաղաքային զբոսայգի) թիրախային գոտիները: 4. Գոտիավորման նախագծերը, համաձայն գործող օրենսդրության, հաստատվում են քաղաքի Ավագանու կողմից և ցանկացած պարագայում, նման սահմանափակումներ ունեցող գոտիներ առանձնացնելիս, կհամադրվեն և բնականաբար, որոշումները կկայացվեն հաշվի առնելով քաղաքի բնակիչության և քաղաքի զարգացման խնդիրները:
14.		14. Արգելված գործունեության տեսակներում	Տարածաշրջանում ՀԷԿ-երի հետագա

		նախատեսված է նոր ՀԷԿ-երի կառուցումը, ինչով է պայմանավորված դա	զարգացումը էկոլոգիական շարժառիթներից ելնելով գտնում ենք ոչ նպատակահարմար: Կարծում ենք, տնտեսական էֆեկտը, որը կարող է ստացվել բոլոր դեպքերում խիստ սահմանափակ քանակի (ջրային ռեսուրսների սահմանափակությամբ պայմանավորված) ՀԷԿ-երի շահագործումից կլինի անհամեմատ ավելի նվազ, քան Տարածաշրջանը, որպես զբոսաշրջիկային տարածք զարգացնելուց ակնկալվող համալիր արդյունքից: Կրկին անգամ նշենք, որ նշված տարածքները մեծամասամբ Դիլիջան ազգային պարկի բնական տարածքներ են: Ջրային ռեսուրսների օգտագործումը՝ ջրային համակարգերի միջոցով, և ջրային ռեժիմը խախտող ցանկացած գործունեություն կհանգեցնի գետերի հուների ձևափոխման, բուսական ծածկույթի խախտումների և այլն
15.		15. Սույն օրենքի շրջանակներում ներդրումների արդյունքում ձևավորվող բիզնեսների և տարածաշրջանում արդեն իսկ գործող ընկերությունների համար ստեղծվում են անհավասար պայմաններ	Կառավարության կողմից հաստատվող Ծրագրերի շրջանակներում տրամադրվող հարկային արտոնությունները սահմանափակվում են ծրագրի իրականացման ժամկետով, այսինքն շինարարության/կառուցապատման ծրագրի ավարտից հետո օբյեկտի շահագործման փուլում արտոնությունները չեն գործում և ձևավորվող բիզնեսները գործում են ընդհանուր հարկման դաշտում:
16.		2. Նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ , 3-րդ մասերով սահմանված՝ մինչև օրենքի ուժի մեջ մտնելը ապօրինի կառուցապատված ոչ բնակելի տարածքների օրինականացման մասով առկա է խնդիր, մասնավորապես	**Ընդունելի է** Նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը խմբագրվել են, իսկ 4-րդ մասը հանվել է:

		քաղաքացիների Հայաստանից բացակայում են, սահմանված ժամկետներում չի օրինականացվում, ինչ է լինելու հետագա ընթացքը	Միաժամանակ նշեք, որ հաշվի առնելով առաջարկները,փաստացի ստացվում է այնպես որ օրինականացման գործընթացը սկսվում է 2 տարի հետո, և այդ ժամանակաընթացքում կարող է նախաձեռնել տեղեկացման գործընթացը: Միաժամանակ Հոդվածը լրացվել է նոր մասով, համաձայն որի ինքնակամ կառուցված ոչ բնակելի տարածքների կառուցապատողներին անհատական ծանուցումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:
17.	**Խոսրով Հարությունյան**	3. Առաջարկվում է խմբագրել Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթը	**Ընդունվել է** Կատարվել է համապատասխան փոփոխություն
18.		4. Նախագիծը վերաբերում է Տարածքին բայց ամբողջ փաստաթղթում հիմնականում խոսքը Դիլիջան քաղաքի մասին է	**Ընդունվել է** Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասը խմբագրվել է, որով հստակեցվել է ձևակերպումը առ այն, որ նախագծում ներդրումների խրախուսման, ներդրումային ծրագրին առնչվող դրույթները վերաբերում են Տարածքին, իսկ քաղաքաշինության ոլորտին վերաբերող դրույթները և կարգավորումները՝ Դիլիջան քաղաքին
19.		5. Առաջարկվում է հստակեցնել Նախագծի 8-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված լիազորությունները, մասնավորապես՝ 7-րդ և 8-րդ կետերում Թույլտվությունների վերաբերյալ եզրակացության տրամադրման դրույթները,	Ընդունելի է կատարվել է համապատասխան փոփոխություն
20.		6. Առաջարկվում է Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ	Ընդունելի է

		մասում «2 աշխատանքային օր» բառերը փոխարինել «ողջամիտ ժամկետում» բառերով	Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասը հանվել է, ինչի շրջանակներում լրացում է իրականացվել 7-րդ հոդվածի 7-րդ մասում, համաձայն որի՝ Ավագանու կողմից հաստատվող Խորհրդի կանոնադրությամբ սահմանվում է Խորհրդի կազմավորման, խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման, նիստերի հրավիրման, աշխատանքների, քննարկումների կազմակերպման, ուսումնասիրությունների իրականացման կարգը, ինչպես նաև քաղաքապետին եզրակացությունների կամ առաջարկությունների ներկայացման և դրանց հետագա ընթացքի ապահովման ընթացակարգը:
21.	**Միեր Շահգելդյան**	7. Առաջարկվում է խմբագրել 7-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված «քաղաքապետը կամ մարզպետը կարող են մասնակցել նիստերին»	**Ընդունելի է** 4-րդ մասը խմբագրվել է
22.		8. Առաջարկվում է Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասում «2 աշխատանքային օր» բառերը հստակեցնել	Ընդունելի է Նախագծի 8-րդ հոդվածի 3-րդ մասը հանվել է, ինչի շրջանակներում լրացում է իրականացվել 7-րդ հոդվածի 7-րդ մասում, համաձայն որի՝ Ավագանու կողմից հաստատվող Խորհրդի կանոնադրությամբ սահմանվում է Խորհրդի կազմավորման, խորհրդի անդամի լիազորությունների դադարեցման, նիստերի հրավիրման, աշխատանքների, քննարկումների կազմակերպման, ուսումնասիրությունների իրականացման կարգը, ինչպես նաև քաղաքապետին եզրակացությունների կամ առաջարկությունների ներկայացման և դրանց հետագա ընթացքի ապահովման ընթացակարգը:
23.	**Հակոբ Հակոբյան**	9. Նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասը հակասում է	**Ընդունելի է**

		ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածը, այն է՝ բացառապես օրենքներով պետք է սահմանվեն արտոնությունները	10-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրվել է
24.		10. Առաջարկվում է խմբագրել 5-րդ հոդվածի 1-ին մասին 5-րդ կետը՝ մասնավորապես սահմանել ՀՀ օրենքով արգելված գործունեության տեսակներ:	**Ընդունելի է** Կատարվել է համապատասխան փոփոխություն
25.		11. Առաջարկվում է խմբագրել 7-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված «քաղաքապետը կամ մարզպետը կարող են մասնակցել նիստերին», ինչպես նաև նախատեսել, որ քաղաքապետը կարող է հրավիրել նիստ	**Նախագծի 7-րդ հոդվածի** 4-րդ մասը խմբագրվել է, այն է՝ Խորհրդի աշխատանքներին կարող են մասնակցել Տավուշի մարզպետը և Դիլիջանի քաղաքապետը կամ վերջիններիս լիազորված անձինք: Միաժամանակ նշենք Խմբագրման համաձայն Քաղաքապետը կամ մարզպետը կարող են մասնակցել նիստերին իրենց ցանկությամբ: Ինչ վերաբերում է քաղաքապետի կողմից նիստ հրավիրելուն, ապա առաջարկը ընդունելի է և համաձայն Օրենքի նախագծի 7-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված է, որ Խորհրդի կանոնադրությունը հաստատում է Դիլիջանի ավագանի, որով կսահմանվի նաև աշխատանքների, քննարկումների կազմակերպման կարգը, որով կսահմանվի՝ քաղաքապետին կից գործող խորհրդի նիստերի կազմակերպման և հրավիրման ընթացակարգը
26.	**Հեղինե Բիշարյան**	12. Արգելված գործունեության տեսակներում նախատեսված է նոր ՀԷԿ-երի կառուցումը, ինչով է պայմանավորված դա	Տարածաշրջանում ՀԷԿ-երի հետագա զարգացումը էկոլոգիական շարժառիթներից ելնելով գտնում ենք ոչ նպատակահարմար: Կարծում ենք, տնտեսական էֆեկտը, որը կարող է ստացվել բոլոր դեպքերում խիստ սահմանափակ քանակի (ջրային

			ռեսուրսների սահմանափակությամբ պայմանավորված) ՀԷԿ-երի շահագործումից կլինի անհամեմատ ավելի նվազ, քան Տարածաշրջանը, որպես զբոսաշրջիկային տարածք զարգացնելուց ակնկալվող համալիր արդյունքից: Կրկին անգամ նշենք, որ նշված տարածքները մեծամասամբ Դիլիջան ազգային պարկի բնական տարածքներ են: Ձրային ռեսուրսների օգտագործումը՝ ջրային համակարգերի միջոցով, և ջրային ռեժիմը խախտող ցանկացած գործունեություն կհանգեցնի գետերի հուների ձևափոխման, բուսական ծածկույթի խախտումների և այլն
27.	**Արծվիկ Մինասյան**	13. Նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված՝ մինչև օրենքի ուժի մեջ մտնելը ապօրինի կառուցապատված ոչ բնակելի տարածքների օրինականացման մասով առկա է խնդիր, մասնավորապես քաղաքացիների Հայաստանից բացակայում են, սահմանված ժամկետներում չի օրինականացվում, ինչ է լինելու հետագա ընթացքը	**Ընդունելի է** Նախագծի 12-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը խմբագրվել են, իսկ 4-րդ մասը հանվել է: Միաժամանակ նշեք, որ հաշվի առնելով առաջարկները,փաստացի ստացվում է այնպես որ օրինականացման գործընթացը սկսվում է 2 տարի հետո, և այդ ժամանակընթացքում կարող է նախաձեռնել տեղեկացման գործընթացը: Միաժամանակ Հոդվածը լրացվել է նոր մասով, համաձայն որի ինքնակամ կառուցված ոչ բնակելի տարածքների կառուցապատողներին անհատական ծանուցումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով:
28.		14. Առաջարկվում է նախագծի անցումային դրույթներով նախատեսված ՀՀ կառավարության կողմից նախագծի շրջանակներում մշակման ենթակա ենթաօրենսդրական	ՀՀ կառավարության 08.04.2004թ. թիվ 541 որոշման համաձայն Հայաստանի Հանրապետության օրենքը

		ակտերի հաստատման համար նախատեսել ժամկետներ	հրապարակվելուց հետո 20-օրյա ժամկետում ՀՀ Վարչապետը ընդունում է որոշում Օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին, որով սահմանվում են ենթաօրենսդրական ակտի մշակման պատասխանատուները և դրանց մշակման ժամկետները
29.		15. Առաջարկվում է նախատեսել հաշվետվողականության մեխանիզմ, համաձայն որի ՀՀ կառավարությունը յուրաքանչյուր տարի Բյուջեի կատարման հաշվետվության շրջանակներում ՀՀ ազգային ժողով ներկայացվող սույն օրենքի շրջանակներում իրականացված ծրագրերի վերաբերյալ տեղեկատվություն:	
30.		16. Օրենքի նախագիծը ողջունելի է և առաջարկվում է ապագայում ՀՀ տարածքի այլ վայրերի համար ՀՀ կառավարությունը հանդես գա նմանատիպ նախաձեռնություններով	**Ի գիտություն**
31.	**Վահրամ Մկրտչյան**	17. Նախագծի 3-րդ հոդվածում տրված են օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, մասնավորապես սահմանված է «Տարածք» հասկացությունը: Նախագծի ամբողջ տեքստում օգտագործվում է «Տարածք» բառը բացառությամբ հոդված 5-ի 1-ին մասի, հետևաբար առաջարկում եմ Նախագծի. • Հոդված 5-ի 1-ին մասում «Դիլիջան քաղաքում և հարակից տարածքներում» բառերը փոխարինել «Տարածք» բառով: • Հոդված 2-ի 1-ին մասի 5-րդ կետի «Տարածքների» բառը փոխարինել «Տարածքի» բառով:	**Ընդունելի է** Կատարվել են համապատասխան փոփոխությունները
32.		18. Հաշվի առնելով, որ ողջ բնակչության շրջանից ընտրության կամ այլ կարգով քաղաքաշինության կամ ճարտարապետության բնագավառի մասնագետների ընդգրկումը որոշակի բարդությունների տեղիք կտա,	Գտնում ենք նպատակահարմար որպեսզի հանձնաժողովի անդամների լինեն Դիլիջան քաղաքի բնակիչներ, Հակառակ դեպքում հնարավոր է

		առաջարկում եմ Նախագծի Հոդված 7-ի 2-րդ մասում «բնակիչներից» բառը փոխարինել «քաղաքաշինության և (կամ) ճարտարապետության բնագավառում գործունեություն ծավալող ՀԿ-ների կողմից առաջարկված անձանցից» բառերով:	իրավիճակ, երբ այլ քաղաքի բնակիչ կարող է ընդգրկվել Խորհրդի կազմում
33.		19. Հաշվի առնելով, որ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքում հստակ սահմանվում է (հոդված 188) ինքնակամ կառույց հասկացությունը, առաջարկում եմ հոդված 12-ի 2-րդ և 3-րդ մասերում «ապօրինի կառուցապատված» բառերը փոխարինել «ինքնակամ կառուցված» բառերով:	**Ընդունելի է** Կատարվել են համապատասխան փոփոխություններ
34.		20. Հոդված 8-ի 3-րդ մասում «առնելով» բառը փոխարինել «առնելու դեպքում» բառերով:	Մասը հանվել է
35.		21. Հոդված 9-ի 5-րդ մասում «հաշվի է առնում» բառերը փոխարինել «կարող է հաշվի առնել» բառերով:	
36.	«Օրինաց երկիր» պատգամավորական խմբակցություն	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան քաղաքային համայնքի հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին ՀՀ օրենքի նախագծի 7-րդ և 8-րդ հոդվածները վերախմբագրել՝ նախատեսելով խորհրդի և ավագանու գործունեության առավել հավասարակշռված հարաբերակցություն:	
37.		7-րդ հոդվածի 2-րդ կետի 3-րդ տողում «յուրաքանչյուր անձ» հասկացությունը հստակեցնել՝ արդյոք խոսքը վերաբերում է ֆիզիկական, թե իրավաբանական անձանց:	Խոսքը վերաբերվում է թե՛ ֆիզիկական, թե՛ իրավաբանական անձանց
38.		7-րդ հոդվածի 2-րդ կետի «Խորհուրդը կազմված է 9	Գտնում ենք, որ ներկայացված

		անդամից, որոնց կազմը հաստատում է Դիլիջանի ավագանին: Խորհրդի կազմը ձևավորվում է. առնվազն 5 անդամ Դիլիջանում ներդրումային ծրագիր իրականացրած անձանց լիազոր ներկայացուցիչներից՝ ընդ որում ծրագիր իրականացրած յուրաքանչյուր անձ հնարավորություն ունենա ներկայացնելու 1 ներկայացուցչի թեկնածություն և ծրագիր իրականացրած անձանց կողմից սույն մասով սահմանված քանակից ավել թեկնածու ներկայացնելու դեպքում նշանակումն իրականացվում է առաջնահերթություն տալով այն անձանց, որոնց կողմից իրականացված ծրագրի ծավալը ավելի մեծ է, 1-ը՝ ավագանու անդամներից» հատվածը փոխարինել «9 անդամներից 3-ին ներկայացնում են ծրագիրը իրականացնողները, 3-ին ավագանին և 3-ը հանդիսանում են հասարակական կազմակերպությունների տվյալ ոլորտի մասնագետ ներկայացուցիչները» հատվածով:	հարաբերակցությունը փոփոխելու անհրաժեշտություն չկա, քանի որ խորհուրդը, այնուամենայնիվ, խորհրդակցական մարմին է, և այն պետք է ունենա հակակշռի դեր, իսկ այս դեպքում՝ որպես այդպիսին կարող են հանդիսանալ ներդրումային ծրագիր իրականացրած անձանց լիազոր ներկայացուցիչները:
39.		8-րդ հոդվածի 4-րդ կետը հանել:	**Ընդունվել է,** 8-րդ հոդվածի 4-րդ կետը հանվել է
40.	**1-ին ընթերցումից 2-րդ ընթերցում քննարկման արդյունքում,** Հեղինե Բիշարյան	Առաջարկվում է նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասը խմբագրել	**Ընդունվել է** Նախագծի 7-րդ հոդվածի 3-րդ մասից հանվել է պարզ բառերը
41.	**1-2 ընթերցման քննարկման արդյունքում** Արայիկ Հովհաննիսյան	Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկվում է հստակ սահմանել, որ խորհուրդը հանդիսանում է խորհրդակցական մարմին	**Ընդունվել է** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:
42.		Նախագծի 9-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերը առաջակում է միավորել և խմբագրել	**Ընդունելի է** Նախագծի 5-րդ, 6-րդ և 7-րդ մասերը միավորվել են դառնալով 5-րդ մաս, համաձայն որի՝ Դիլիջանի քաղաքապետը որոշումները ընդունելիս հաշվի է առնումԽորհրդի եզրակացությունը: Խորհրդի եզրակացության հետ համաձայն չլինելու դեպքում Դիլիջանի քաղաքապետը 3-օրյա ժամկետում հրավիրում է համայնքի ավագանու արտահերթ նիստ, որում քննարկվում է Խորհրդի եզրակացությունը և Դիլիջանի

			քաղաքապետի կողմից Խորհրդի եզրակացությունը չընդունելու հիմնավորումը: Եթե Դիլիջանի ավագանին հավանություն է տալիս Խորհուրդի եզրակացությանը, ապա Դիլիջանի քաղաքապետն որոշում կայացնելիս առաջնորդվում է ավագանու որոշմամբ:
43.		Առաջարկվում է հստակեցնել 7-րդ մասի 4-րդ և 8-րդ մասերը	**Ընդունվել է** Նախագծի 7-րդ հոդվածի 4-րդ մասը խմբագրվել է, իսկ 8-րդ մասը հանվել
44.		Նախագծի 7-րդ հոդվածի 2-րդ մասում առաջարկվում է «բնակիչներից» բառից առաջ լրացնել «համայնքի» բառերը	**Ընդունվել է** կատարվել է համապատասխան լրացումը: